

**ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԵՎ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ**

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գ. Ս.

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները (այսուհետ՝ ՍՊԸ) քաղաքացիական շրջանառությունում ունեն լայն կիրառություն: Թեև մեր երկրում ՍՊԸ-ները օրենսդրորեն ամրագրում են ստացել և շրջանառությանը մասնակցել բոլորովին վերջերս, համաշխարհային պրակտիկայում դրանք քաղաքացիական իրավահարաբերություններին մասնակցում են վաղ անցյալից: Դեռևս XIX դարի վերջերին տնտեսական ընկերության կազմակերպաիրավական այս ձևն օրենսդրական ամրագրում է ստացել, այսինքն՝ ձեռք է բերել իրավաբանական անձի կարգավիճակ և մասնակցում է քաղաքացիական իրավահարաբերություններին:

Այս աշխատանքի նպատակը ՍՊԸ-ի՝ որպես տնտեսական ընկերության կազմակերպաիրավական ձևերից մեկի ծագման և գոյության անհրաժեշտության բացահայտումն է: Իրավաբանական գրականության մեջ կարծիք կա, որ «սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պատմական նախորդներ չունի»¹: Թեև այն շուրջ երկու հարյուր տարվա օրենսդրական ամրագրման պատմություն ունի, այնուամենայնիվ, դրա ծագումը հանկարծակի չէ և, մեր կարծիքով, դրա արմատները գնում են դեպի վաղ անցյալ: Որպես պատմական զարգացման արդյունք՝ ՍՊԸ-ն իր էությանը անցումային ձև է, այսինքն՝ այն ձևավորվել է արդեն իսկ գոյություն ունեցող տնտեսական ընկերություններին և ընկերակցություններին հատուկ հատկանիշների համակցությամբ: ՍՊԸ-ի ծագման ու զարգացման ուսումնասիրության բարդությունն այն է, որ դրա ծագումը պայմանավորված է մի շարք երևույթների արմատներով:

Իրավաբանական անձի կազմակերպաիրավական ձևերից յուրաքանչյուրը սուկ գիտնականների մտքի արդյունքը չէ, այլ օբյեկտիվորեն բխել է առևտրային հարաբերությունների մասնակիցների տնտեսական պահանջներից: ՍՊԸ-ի ծագումը բացահայտելու համար անհրաժեշտ է քննության առնել այն հասարակական հարաբերությունները, որոնցով պայմանավորված են որոշակի տնտեսական պահանջների շնորհիվ ձևավորված հատկանիշները և միայն դրանց էությունը բացահայտելուց հետո կարելի է անցնել դրանց կարգավորմանն ուղղված նորմերի ամրագրման ու զարգացման ուսումնասիրությանը:

ՍՊԸ-ն այլ տնտեսական ընկերություններից և ընկերակցություններից առաջին հերթին տարբերվում է իր մասնակցի (մասնակիցներ-

¹ Бергман В., Комаров А. С., *Введение в основные понятия германского торгового права и права хозяйственных организаций. Германское право, ч. 2, М., 1996, с. 13.*

րի) պատասխանատվության սահմանափակմամբ, ուստի հարկավոր է բացահայտել նաև, թե կազմակերպության պարտավորություններով մասնակիցների պատասխանատվության սահմանափակման սկզբունքը երբ և ինչ պայմաններում է ի հայտ եկել:

Առևտրային իրավաբանական անձի ցանկացած կազմակերպաիրավական ձև (այդ թվում նաև՝ ՄՊԸ) տնտեսական կատեգորիա է: Գ. Շերշենևիչն այն կարծիքին է, որ «Առևտրային ձեռնարկությունները, կազմակերպաիրավական նոր ձևեր փնտրելով, ուշադրություն են դարձնում ոչ այնքան դրանց ավաբանական կառուցվածքին, որքան տնտեսական խնդիրներին»²: Տնտեսագիտական գրականությունում «ձեռնարկություն» հասկացությունը նշանակում է տնտեսական միասնություն, որում միավորվում և ներդաշնակվում են տնտեսական գործունեությունն ու մարդկային գործոնները³: ՄՊԸ-ի տնտեսական բովանդակության պարզաբանումը դրա տնտեսական և իրավաբանական կատեգորիաները չի նույնացնում: Տնտեսական ոլորտն իրական արտադրական հարաբերություն է և ոչ թե իրավաբանական, ուստի պետք է ընդգծել, թե ինչպես է դրա տնտեսական էությունը հանդես գալիս իրավական ոլորտում: Այլ կերպ ասած՝ ՄՊԸ-ի ծագումը բացահայտելու համար անհրաժեշտ է քըննության առնել այն տնտեսական պահանջները, որոնց հետևանքով առաջ քաշվեց նմանօրինակ ընկերության ստեղծման անհրաժեշտությունը:

Ներկայիս ՄՊԸ-ին բնորոշ հատկանիշների զարգացումը տեղի է ունեցել տարբեր առևտրային ընկերությունների և ընկերակցությունների շրջանակներում, ուստի նախ պետք է ուսումնասիրել դրանց ծագման պատճառներն ու կազմակերպման գործընթացում ծագած հատկանիշները: Դրանից հետո միայն կարելի է բացահայտել, թե որոնք են եղել ՄՊԸ-ի ծագման պատճառները, և թե ինչպես է ուսումնասիրվող ընկերությունն առաջացել և օրենսդրական ամրագրում ստացել արդեն իսկ գոյություն ունեցող տնտեսական ընկերություններին և ընկերակցություններին հատուկ հատկանիշների համակցությամբ:

Որոշակի տնտեսական նպատակների հասնելու համար միասնական ջանքերի և միասնական գույքի գաղափարը ծագել է դեռևս վաղ անցյալում: Սկսած Հին Եգիպտոսից և Հին Հունաստանից՝ քաղաքացիական իրավունքը պարունակել է նորմեր, որոնք ձևավորել են այդ հարաբերությունները, սակայն ընկերության միավորման գաղափարն ամենից առաջ պատշաճ իրավաբանական ամրագրում է ստացել միայն հռոմեական իրավունքում, որտեղ էլ զարգացել է առևտրային կազմակերպությունների ստեղծման գործընթացը:

Միավորման ամենահասարակ և սկզբնական ձևը ընկերակցության (societas) մասին պայմանագիրն էր: Յու. Բարոնն ընկերակցությունը բնութագրում էր հետևյալ կերպ.
«Ընկերակցությունը կոն-

² Шершеневич Г. Ф., *Курс торгового права, т. 1, СПб., 1908, с. 398.*

³ Могилевский С. Д., *Общество с ограниченной ответственностью. Учеб.-прак. пособие, 3-е изд., М., 2000, с. 3.*

սենսուալ պայմանագիր էր, երկու կամ ավելի անձանց համաձայնություն՝ ընդհանուր միջոցներով և համատեղ մասնակցությամբ թույլատրելի նպատակների հասնելու համար»⁴: Ընկերակցության մասնակիցները յուրաքանչյուր ընկերոջ անփութության համար կրում էին համապարտ կամ բաժնային պատասխանատվություն, այսինքն՝ ընկերակցության շրջանակներում իրենց վրա էին վերցնում տնտեսական գործունեության իրականացման ռիսկը: «Հռոմեական ընկերակցության բոլոր մասնակիցները պարտավորության կողմ էին և, պայմանագրի պայմաններին համապատասխան, իրենց ամբողջ գույքով (այլ ոչ թե ներդրումների չափով) կրում էին համապարտ կամ բաժնային պատասխանատվություն»⁵: Դեռ ավելին, ընկերակցության անունից հանդես եկող մասնակիցը համարվում էր մյուս բոլոր մասնակիցների ներկայացուցիչ, այլ ոչ թե ընկերակցության մարմին: Այսինքն՝ «Երբորդ անձանց հետ հարաբերություններում մասնակիցների համար ընկերակցության պայմանագիրը ոչ մի նշանակություն չունի»⁶:

«Ընկերակցությունը չէր կարող դիտվել որպես իրավաբանական անձ ոչ իր մասնակիցների և ոչ էլ երբորդ անձանց հետ հարաբերություններով»⁷: Ընկերակցությունը պարտք ունենալ և դրան համապատասխան պատասխանատվություն կրել չէր կարող, այլ գոյություն ուներ բացառապես առանձին՝ մասնակցի պարտք: Որպես իրավասուբյեկտության արտահայտման ձև՝ ընկերակցությունը քաղաքացիական շրջանառությունում իր անունից հանդես գալու և ֆիրմային անվան իրավունք չուներ:

Ընտանեկան ընկերակցությունում առանձնացված գույքի բացակայությունը, ընկերակցության իր պարտավորություններով պատասխանատվության բացակայությունն ու դրանում մեկ ընդհանուր կոլեկտիվ կամքի բացակայությունը հանգեցրին ֆիզիկական անձից տարբերվող սուբյեկտի ստեղծման անհրաժեշտությանը: Այլ կերպ ասած՝ քաղաքացիական շրջանառությանը պետք էր այնպիսի սուբյեկտ, որը տնտեսական գործունեություն կծավալեր իր անունից և պատասխանատվություն կկրեր իր առանձնացված գույքի հաշվին, և որի գոյությունը կախված չէր լինի նրա մասնակիցների գոյությամբ:

Սկզբում առանձին միավորումների ֆիզիկական անձանց սուբյեկտիվ իրավունքներով օժտելու փորձեր կատարվեցին, որոնց կանոնադրություններում ամրագրվեց գույքի անբաժանելիության սկզբունքը: Դրա հետևանքով այդպիսի սուբյեկտներ ճանաչվեցին քաղաքային համայնքները, մունիցիպիալները (*municipia*), տարբեր տեսակի միավորումները, մասնագիտացված և կրոնական միությունները (*collegia, universitas*), ինչպես նաև Հռոմի պետությունը՝ ի

⁴ Барон Ю., Система римского гражданского права, вып. 3, СПб., 1910, с. 215.

⁵ Ефимов В. В., Догма римского права, СПб., 1999, с. 513.

⁶ Барон Ю., *նշվ. աշխ.*, էջ 218:

⁷ Садовский В. С., О товариществе как юридическом лице (Журнал министерства юстиции, 1897, N 9, с. 16).

դեմս իր գանձարանի (fiscus): Ակնհայտ է՝ թվարկվածներում ձեռնարկատիրական միավորումներ չկան:

Հին Հռոմում առևտուրը պայմանավորված էր մասնավոր անձանց մասնակցությամբ, իսկ իրավաբանական անձն այդ բնագավառում գրեթե մասնակցություն չուներ: «Հռոմեական իրավունքում բացակայում էր «իրավաբանական անձ» տերմինը»⁸: Գոյություն ունեցող իրավաբանական անձանց շարքում բացակայում էին պայմանագրային հարաբերություններով մասնավոր ձեռնարկատիրական միավորումները:

Հռոմեական միավորումների զարգացման շնորհիվ առանձնացվում էին այնպիսի իրավաբանական գաղափարներ, միջոցներ ու հատկանիշներ, որոնք հետագայում արտացոլվեցին իրավունքում և կիրառելի դարձան տարբեր ձեռնարկատիրական միավորումներում: Դրանք էին՝ ինքնուրույն, այսինքն՝ ֆիզիկական անձանցից անկախ քաղաքացիական շրջանառությանը մասնակցելու, մասնակիցներից անկախ միավորմանը պատկանող գույքի, միավորման՝ անկախ մասնակիցների դուրս գալու հանգամանքի գոյության շարունակման, միավորման պարտավորություններով մասնակիցների պատասխանատվության բացակայության, ինչպես նաև մասնակիցների պարտավորություններով միավորման պատասխանատվության բացակայության գաղափարները: Նշվածներից վերջին գաղափարների վերաբերյալ հստակ մոտեցում ունի Բ. Պերետերսկին, ըստ որի՝ «Միավորման պարտքն առանձին մասնակիցների պարտքը չէ, և ինչ որ պարտավոր է միավորումը, պարտավոր չեն առանձին մասնակիցները»⁹: Առևտրային ընկերակցությունների զարգացման հաջորդ փուլը միջնադարն է: Առաջին առևտրային ընկերակցությունները սկզբնավորվել են XI-XII դդ.: Այդ ժամանակներում տեղի է ունենում կապիտալների միավորում, և ի հայտ են գալիս ապրանքների լիարժեք փոխարժեք համարվող փողն ու առևտրի զարգացումը: Նրման պայմաններում տնտեսավարման համար բնական միավորումն առաջին հերթին ընտանիքն էր: Դրանցում մասնակիցներն ունեին սերտ հարաբերություններ: Ընտանեկան ընկերակցություններն իրավաբանական գրականությանը հայտնի են “*compagnia fraterna, societas fratrum*”¹⁰ անվանումներով: «Ընտանեկան միավորման առևտրային հարաբերությունների կարգավորման միակ աղբյուրը միջնադարյան սովորույթներն էին»¹¹: Թեև այդ ժամանակներում տնտեսության մեջ վարկը մեծ նշանակություն չուներ, այնուամենայնիվ, վարկատուներին ձեռնտու էր, որ ունեցվածքը բաժանված

⁸ Зом Р., *Институции римского права*, СПб., 1888, с. 85; Братусь С. Н., *Субъекты гражданского права*, М., 1950, с. 142; Новицкий И. Б., Перетерский И. С., *Римское частное право*, М., 1994, с. 115.

⁹ Перетерский И. С., *Всеобщая история государства и права*, вып. 2, *Древний Рим*, М., 1945, с. 119.

¹⁰ Бродель Ф., *Материальная цивилизация, экономика и капитализм*, т. 2, М., 1998, с. 435.

¹¹ Шершеневич Г. Ф., *Учл. шл.*, էջ 308:

լիներ մի քանի անձանց միջև: Վարկունակությունը պահպանելու համար ընտանիքի անդամները ունեցվածքի անբաժանելիության մասին կնքում էին պայմանագիր: Ժամանակի ընթացքում այն զարգանալով դարձավ լիակատար ընկերակցության պայմանագիր: Ըստ Գ. Շերշենիչի «Միջնադարյան ընկերակցության ծագման հիմքում ընկած է ոչ թե համատեղ ունեցվածք ստեղծելու, այլ արդեն իսկ գոյություն ունեցող ունեցվածքը չբաժանելու ցանկությունը»¹²:

Նշված հանգամանքները բացատրում են միջնադարյան առևտրի պրակտիկայում ձևավորված ընկերակցությունների հատկանիշներն ու իրավաբանական միջոցները: Դա առաջին հերթին շրջանառությունում ընդհանուր անվան տակ հանդես գալն է, որը ներառում է ընկերակցության բոլոր մասնակիցների անունները: «Սովորույթների ուժով ձևավորված այս տեսակի առևտրային ընկերակցությունը դրա ներքին իրավասուբյեկտության և իրավաբանական անձնավորման արտահայտությունն էր (ինչը հռոմեական իրավունքում գոյություն չուներ)»¹³: Ընտանեկան ձեռնարկության զարգացման պայմաններում ձևավորվեց ընկերակցության պարտքերով մասնակիցների համապարտ պատասխանատվությունը:

Նեղ անձնական հարաբերություններով և ոչ մեծ կապիտալով ընկերակցությունը տնտեսությունում զգալի դեր չուներ: Բացի դրանից, ընկերակիցների լիակատար պատասխանատվությունը արտադրության ընդլայնման համար կապիտալների ներգրավման հրնարավորություն չէր տալիս: Միաժամանակ կային մարդիկ, որոնք ուզում էին իրենց կապիտալները դնել շրջանառության մեջ, պայմանով, որ իրենց պատասխանատվությունը չգերազանցեր ներդրած կապիտալի չափը:

Այդ հարցն իր լուծումը ստացավ ծովային առևտրում: Դրա համար պահանջվում էին այնպիսի կապիտալներ, որոնք կարող էին բացառապես ստացվել միավորման ճանապարհով: Իրավաբանական գրականությունում առավելապես գերիշխում է այն կարծիքը, որ ծովային ընկերակցությունները ստեղծվել են XII-XIII դդ.¹⁴: Ծովային ընկերակցությունների ներքին հարաբերությունները կազմում էին ավանդատուների և վաճառականների փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները: Այդ հարաբերությունները ստացան կոմանդիտ (վստահություն) անվանումը (accomanda, comanda, accomandita) : Ընկերակցության այս տեսակը շրջանառությանը մասնակցում էր ընդհանուր ֆիրմային անվան տակ, որը ներառում էր վաճառականի, բայց ոչ երբեք ավանդատուի անունը, քանզի նրա անվան ներգրավումը կնշանակեր, որ ընկերակցության պարտավորություններով վերջինս կրում է պատասխանատվություն: Գ. Շերշենիչի կարծիքով՝ «Նշված հարաբերություններն իրավաբանորեն

¹² Նույն տեղում, էջ 308:

¹³ Победоносцев К., Курс гражданского права, т. 3, СПб., 1880, с. 505.

¹⁴ Бродель Ф., նշվ. աշխ., էջ 434, 438:

կազմում են հանձնարարությունից և փոխառությունից բխող հարաբերությունների միջինը»¹⁵:

Իրավաբանական տեսանկյունից կոմանդիտային ընկերակցությունների գործողություններն ըստ էության, հետևյալն էին: Հիմնադիրները որպես հիմնական կապիտալ, հայտարարում էին նավի գինը՝ նշելով, թե քանի մասի է այն բաժանված: Կապիտալը ներկայացվում էր փողային արժեքով, և դրան համապատասխան ներդրումները ևս կատարվում էին փողի տեսքով: Կառավարումն իրականացնում էր մասնակիցների ընդհանուր ժողովը և նրանց կողմից ընտրված կառավարիչը: Որոշումներն ընդունվում էին ձայների մեծամասնությամբ, և մասնակիցների ձայները համապատասխանում էին ընդհանուր կապիտալում նրանց բաժինների թվին: Այստեղ կարելի է նկատել այսօրինակ ընկերակցության՝ մեզ համար ամենահետաքրքիր հատկանիշը: Խոսքն ընկերակիցների անձնական պատասխանատվության մասին է: Եթե վաճառականի համար այն միանշանակ գոյություն ուներ, ապա ավանդատուների պատասխանատվությունը սահմանափակվում էր նրանց ներդրումների չափով: Այլ կերպ ասած՝ կոմանդիտային ընկերակցություններում ծագեց նախապես որոշված սահմաններով՝ պատասխանատվության սահմանափակման սկզբունքը:

Ծովային ընկերակցություններից հետո, բնականաբար, պետք է ի հայտ գային տնտեսական նոր պահանջներին համապատասխան միավորումներ: Այդպիսի տնտեսական պահանջներ ի հայտ եկան XIII-XIV դդ. Իտալիայում, մասնավորապես Վենետիկում և Ջենովայում: Պատերազմի և պետության կազմալուծման պայմաններում պետությունը փոխառությունների տեսքով անհրաժեշտ միջոցներ ստացավ՝ դրանց դիմաց խոստանալով տոկոսներ: Ներդնողների շահերի պաշտպանության նպատակով պետությունը նրանց պետական պարտքը վերահսկելու հնարավորություն տվեց: Այդ նպատակով ներդնողները կազմեցին միություն, որը կոչվում էր մաոն (*maone կամ montes*): Հիմնական կապիտալը ձևավորվում էր պետական պարտքերի հաշվին և հավասարապես բաշխվում ըստ մասնակցության բաժինների (*loca*):

Միավորման այս ձևի պայմաններում ևս հետաքրքրական է մասնակիցների պատասխանատվության հարցը: Մաոններում գործում էր մասնակիցների բաժինների չափով նրանց պատասխանատվության սահմանափակման սկզբունքը: Ըստ Ա. Կամինկայի՝ «Պատասխանատվության սահմանափակման սկզբունքը մտացածին չէ, այլ աստիճանաբար մշակվել է գործարարական պրակտիկայում»¹⁶:

Ավելի ուշ ժամանակաշրջանում առևտրի զարգացումը պահանջեց առավել խոշոր ներդրումներ: Նոր տարածքների բացահայտումն ու անդրատլանտյան առևտուրը մեծ նավերի և հսկայական միջոց-

¹⁵ *Першеневич Г. Ф., նշվ. աշխ., էջ 365:*

¹⁶ *Каминка А. И., Акционерные компании, т. 1, СПб., 1902, с. 144.*

ների կարիք ունեին: Ինչպես տեսնում ենք, պահանջները բավական հակասական են: Մի կողմից առևտրային գործունեության իրականացման համար խոշոր միջոցների ներգրավման անհրաժեշտությունն ու մեծ ռիսկը, մյուս կողմից՝ հնարավորինս շատ ավանդատուներ ներգրավելու նպատակով նրանց պատասխանատվության սահմանափակման ակնհայտ անհրաժեշտությունը: Նման պայմաններում, որպես դրամական խոշոր միջոցների հայթայթման միջոց, ծագեց բաժնետիրական ընկերությունը: Ըստ Կ. Մարքսի՝ «Աշխարհը մինչև այժմ կմնար առանց երկաթուղային գծերի պատրաստման, եթե հարկ լիներ սպասելու, որ առանձին կապիտալներ հասնեին այնպիսի չափերի, որ հնարավոր լիներ դրանց պատրաստումը, սակայն բաժնետիրական ընկերությունների միջոցով դրանց պատրաստումն իրականացվեց մեկ ակնթարթում»¹⁷: Իրավաբանական գրականությունում առավելապես գերիշխում է այն կարծիքը, որ բաժնետիրական ընկերությունները ծագեցին XVIII դարում¹⁸:

Չխորանալով բաժնետիրական ընկերությունների զարգացման վերլուծության մեջ՝ կարելի է ասել, որ բաժնետիրական ընկերության ծագման տնտեսական շարժառիթը խոշոր չափի կապիտալի կենտրոնացումն էր, այսինքն՝ ունեցվածքի միավորումը: Բաժնետիրական ընկերությունը շրջանառությունում հանդես էր գալիս իր ֆիրմային անվան տակ, որը մասնակիցների անունները չէր ներառում (անանուն ընկերություն), քանի որ ֆիրմային անվանման մեջ նրանց անունների ներառումը կենթադրեր ընկերական միավորման պարտավորություններով նրանց անձնական պատասխանատվությունը: Բաժնետիրական ընկերության անանուն լինելը հանգեցնում է նրան, որ ընկերության և մասնակիցների միջև բացակայում է ամուր կապը: Վ. Ռոզենբերգը նշում է. «Բաժնետերերն իրականում մեկուսացված են ընկերության գործունեությունից: Տնտեսական գործառնությունները բաժանված են մասամբ հատուկ ընտրովի մարմինների և մասամբ ընկերության վարձու գործակալների միջև»¹⁹: Այստեղ տեսնում է մեզ համար հետաքրքիր ևս մի զարգացում: Նման պայմաններում տնտեսությանն անհրաժեշտ էր միավորման այնպիսի ձև ստեղծել, որը կապահովեր ընկերության և մասնակիցների միջև սերտ կապը, կխորացներ մասնակիցների շահագրգռվածությունն ընկերության գործունեությամբ, և որի պայմաններում հնարավորինս քիչ կլինեին դրա կարգավորմանն ուղղված իմպերատիվ նորմերը:

Տնտեսական նոր պահանջների բավարարման նպատակով օրենսդիրն ուներ հետևյալ ձևերից մեկն ընտրելու հնարավորությունը՝ բացառել առևտրային ընկերակցությունների ստեղծման (գրանցման) հնարավորությունը՝ խնդրի լուծումը թողնելով ընկերակցության պայմանագրի կողմերի հայեցողությանը, նվազեցնել բաժնետի-

¹⁷ Маркс К., Энгельс Ф., Сочинения, т. 1, с. 642.

¹⁸ Гойхбарг А. Г., Очерки хозяйственного права, М., 1927, с. 93.

¹⁹ Розенберг В. В., Общество с ограниченной ответственностью, СПб., 1912, с. 15.

րական ընկերություններին ներկայացվող պահանջները՝ դրանով իսկ ճանապարհ հարթելով հնարավոր չարաշահումների համար, կամ ստեղծել ընկերական միավորման նոր ձև:

Ակնհայտ է, որ թվարկվածներից միավորման նոր ձև ստեղծելու գաղափարն առավել հեռանկարային էր: Բազմաթիվ հետազոտողների կարծիքով քաղաքացիական իրավունքում գործող առևտրային ընկերակցությունների և ընկերությունների (բաժնետիրական ընկերություն) միջև սերտ կապերը օրենսդրի համար դյուրին դարձրին ստեղծելու, ճանաչելու և զարգացնելու ընկերական միավորումների միջին (անցումային) ձևը, որը հաջողությամբ կմիաձուլեր ընկերակցություններին և բաժնետիրական ընկերություններին բնորոշ հատկանիշները²⁰: Այն հաշվարկված էր մանր ձեռնարկությունների համար, որոնց համար տնտեսական ընկերության բաժնետիրական ձևը բավական թանկ էր և մեծածավալ:

Միավորման նոր ձևի բնութագիրը բավական հիմնավորված էր այնքանով, որքանով որ հիմնական հարցը ընկերության պարտքերով մասնակիցների պատասխանատվության սահմանափակումն էր (ավելի կոնկրետ՝ բացառումը): Պատասխանատվության սահմանափակման սկզբունքը ձևավորվեց կոմանդիտային ընկերակցություններում: Վաճառականները պարտավորությունների համար կրում էին պատասխանատվություն, սակայն ավանդատուների պատասխանատվությունը նրանց ներդրումներով սահմանափակվում էր:

Տնտեսական շրջանառությունում առաջ եկավ ընկերական միավորման այնպիսի ձևի ստեղծման պահանջ, որում մասնակիցը պատասխանատվություն կկրեր ոչ թե իր ամբողջ գույքով, այլ իրեն և երրորդ անձանց նախապես հայտնի սահմաններով: Ա. Կամինկայի կարծիքով՝ «Ի տարբերություն բաժնետիրական ընկերությունների, միավորման, այս ձևում պատշաճ տեղ պետք է զբաղեցնեք անձնական տարրը»²¹: «Խնդիրը գլխավորապես այն էր, որ կապիտալիստներին հնարավորություն ընձեռվեր մասնակցելու ձեռնարկատիրական գործունեությանը, և որի պայմաններում նրանց պատասխանատվությունը կսահմանափակվեր իրենց ներդրումների արժեքների սահմաններում»²²:

ՄՊԸ-ն ստեղծվեց որպես միավորման այնպիսի ձև, որի համար վարկն ուներ մեծ նշանակություն: Շրջանառությանը մասնակցելու համար դրա մասնակիցներն ընկերության միջոցով կարող էին ձեռք բերել վարկեր՝ սահմանափակելով իրենց պատասխանատվությունը ընկերության պարտավորություններով: Առաջինն այդ տեսակի ընկերության ստեղծման անհրաժեշտությանն արձագանքեց Գերմանիան, որտեղ 1892 թ. ընդունվեց ՄՊԸ-ների մասին օրենքը: Իրավաբանական տեսանկյունից ՄՊԸ-ն անվերապահորեն ճանաչվեց որպես իրավաբանական անձ: Պահանջվում էր դրա գրանցումը՝ միավորման

²⁰ Shelinger R. B., Baade H. W., Damaska H. R., Herzog P. E., *Comparative Law*, Oxford University Press, 1998, p. 806.

²¹ Каминка А. И., *Очерки торгового права*, вып. 1, СПб., 1911, с. 272.

²² Նույն տեղում, էջ 283:

պայմանագրի և կանոնադրության բովանդակությամբ: Հարկավոր էր 20.000 գերմանական մարկի չափով նվազագույն կանոնադրական կապիտալ: Մասնակիցները կարող էին վաճառականներ չլինել և, ընդհանուր կանոնի համաձայն, իրենց ներդրումներից ավելի չափով պատասխանատվություն չէին կրում: Դրա հետ մեկտեղ, կանոնադրությամբ կարող էր սահմանված լինել ավանդների ներդրման լրացուցիչ պարտավորություն: Այսպես, այն դեպքերում, երբ մասնակիցն ամբողջությամբ չէր մուծում իր փայավճարը, ապա մյուս մասնակիցները նրա չվճարած փայավճարի արժեքի սահմաններում կրում էին համապարտ պատասխանատվություն: Ընկերությունը չէր կարող ունենալ ավելի շատ փայեր, քան մասնակիցները: Ընկերության ընդհանուր կապիտալում իր ունեցած փայաբաժինը մասնակիցը կարող էր օտարել բացառապես նոտարական կարգով և մյուս բոլոր մասնակիցների համաձայնությամբ: Հաշվեկշռի հրապարակման պարտավորություն գոյություն չունեի (բացառությամբ բանկային գործառնությունների):

Օրենսդիրն անսահմանափակ պատասխանատվությունն այլևս չէր դիտում որպես երրորդ անձանց շահերի պաշտպանության միակ միջոց: Դա կարելի է բացատրել հետևյալ կերպ: Նախ և առաջ նմանօրինակ ընկերության պատասխանատվության բնույթը նախապես հայտնի է բոլոր նրանց, ովքեր ընկերության հետ մտնում են հարաբերությունների մեջ: Երկրորդ հերթին՝ սահմանափակ պատասխանատվությունը պահանջում էր նվազագույն կապիտալի սահմանման տեսքով փոխհատուցման միջոցներ, ամբողջությամբ ներդրումների կատարման պարտավորություն, ներդրումների չկատարման դեպքում մասնակիցների պատասխանատվություն, ինչպես նաև բաժնի փոխանցման հետ կապված դժվարություններ: Վերջինիս իրականացման համար և հնարավոր չարաշահումները կանխելու նպատակով մասնակցության բաժիններն արժեթղթերով արտահայտված չէին: Բաժինը փոխանցելու համար անհրաժեշտ էր բոլոր մյուս մասնակիցների համաձայնությունը, որոնք, երրորդ անձանց համեմատ, այդ բաժինը ձեռք բերելու հարցում օգտվում էին նախապատվության իրավունքից:

Տնտեսական ընկերության այս ձևը տատանվում էր լիակատար ընկերակցության և բաժնետիրական ընկերության միջև, ընդ որում՝ օրենսդիրը նշված ձևերից մեկին մոտենալու աստիճանը թողել էր նոր ձևի մասնակիցների հայեցողությանը:

Միջազգային մրցակցության հետևանքով ՄՊԸ-ն մեծ ճանաչում ձեռք բերեց և լայն տարածում ստացավ մի շարք երկրներում: Գերմանիայից հետո 1906 թ. այն ամրագրվեց Ավստրիայի օրենսդրության մեջ:

Անգլիայում նմանատիպ ձևն ամրագրվել է 1913 թ., որը կոչվում էր մասնավոր կազմակերպություն (private company) : 1926 թ. կազմակերպության այս տեսակն ընդունվեց նաև Ֆրանսիայի օրենսդրությունում: 1926 թ. Լիխտենշտեյնի Քաղաքացիական օրենսգրքի 834-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձը կարող էր ստեղծել այնպիսի կազմակերպություն, որի պայմաններում նրա պատասխա

նատվությունը սահմանափակված կլիներ իր ներդրումների չափով²³: Այնուհետև միավորման այս տեսակը 1926 թ. ընդունվեց Ֆրանսիայի օրենսդրությամբ (*societas a responsabilitate Limitee*) : 1966 թ. փետրվարի 1-ին Պանամայում ևս ընդունվեց ՄՊԸ-ների մասին օրենքը²⁴: ՄՊԸ-ները գերմանական մոդելի նմանության հիմքով ընդունվեցին մի շարք այնպիսի երկրներում, ինչպիսիք են Ճապոնիան, Բելգիան, Իտալիան, Իսպանիան, Պորտուգալիան, Լյուքսեմբուրգը, Հունաստանը և Հունգարիան: Պահպանվելով գրեթե իր սկզբնական տեսքով՝ ՄՊԸ-ն ենթարկվեց ընդամենը մեկ լուրջ փոփոխության, այն է՝ դրա ստեղծման հնարավորությունը մեկ անձի կողմից՝ ֆիզիկական կամ իրավաբանական: Գերմանիայում դա թույլատրվեց 1980 թ. հուլիսի 4-ի օրենքով²⁵, իսկ Ֆրանսիայում՝ 1985 թ. հուլիսի 11-ի օրենքով²⁶: Մեկ անձի կողմից ՄՊԸ ստեղծելը հնարավոր էր, ինչպես մեկ անձի կողմից ստեղծվելու ժամանակ, այնպես էլ այն դեպքում, երբ արդեն իսկ ստեղծված ընկերությունում մնում էր մեկ անձ:

Ռուսաստանում առևտրային ընկերություններն ու ընկերակցությունները երկար տարիներ օրենսդրորեն ամրագրված չէին: Դա ապրանքադրամային հարաբերությունների թույլ զարգացածության և դրանից ածանցյալ ձեռնարկատիրական գործունեության իրականացման ձևերի գոյության անհրաժեշտության բացակայության արդյունքն էր: Ռուսաստանի կայսրության օրենքների ժողովածուն ստեղծվելուց հետո ընկերակցություններն ընդգրկվեցին քաղաքացիական օրենքների ժողովածուում և առևտրային կանոնադրության մեջ: Այդ օրենքների ժողովածուն տալիս էր տնտեսական ընկերությունների և ընկերակցությունների սպառիչ թվարկումը՝ բաժնետիրական ընկերություն, լիակատար ընկերակցություն, արտելային ընկերակցություն և վստահության վրա հիմնված ընկերակցություն: Ինչ վերաբերում է ՄՊԸ-ին, ապա գիտնականները միաձայն բացառում էին դրա գոյության հնարավորությունը ռուսական իրավունքում: Դրա հիմքում ընկած էր այն հանգամանքը, որ պատասխանատվությունը բացառության կարգով կարող էր սահմանափակել միայն պետությունը, այն էլ առանձին դեպքերում:

Ավելի ուշ ՌՄՏՄՌ 1922 թ. Քաղաքացիական օրենսգիրքը ՄՊԸ-ների կարգավորմանը նվիրեց չորս հոդված՝ 318-321-րդ: Եվրոպայում արդեն իսկ գոյություն ունեցող ՄՊԸ-ներից այստեղ հիմնական տարբերությունն այն էր, որ մասնակիցները պատասխանատվություն էին կրում ոչ միայն իրենց ներդրումների արժեքների սահմաններում, այլև իրենց անձնական գույքի հաշվին: ՄՊԸ-ն կարգավորող նորմերն առավելապես հրամայական բնույթի էին, կիրառելի

²³ Кулагин М. И., *Избранные труды*, М., 1997, с. 37.

²⁴ Тибурсио Р. Б., *Правовое регулирование акционерных обществ в Панаме. Автореф., канд. дисс., М., 1997, с. 7.*

²⁵ Жамен С., *Основы немецкого торгового и хозяйственного права*, М., 1995, с. 38.

²⁶ Лакур Л., *Торговое право*, М., 1993, с. 111.

էին հատուկ ուղորտներում, ինչի հետևանքով XX դ. վերջում դրանք ընդհանրապես դուրս մղվեցին շրջանառությունից: «Ռուսաստանում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների վերականգնման առաջին փուլը սկսվեց 1990-ական թթ., սակայն առաջին օրենսդրական ակտերը, որոնք կոչված էին կարգավորելու տնտեսական ընկերությունների ստեղծման, գործունեության և քաղաքացիաիրավական պատասխանատվության հետ կապված հարաբերությունները, մի շարք հարցերում հակասում էին միմյանց»²⁷:

ՀՀ-ում տնտեսական ընկերությունների, մասնավորապես ՍՊԸ-ների ամրագրման առաջին փուլը ևս սկսվեց 1990-ական թթ.: Դա ՀՀ Գերագույն խորհրդի՝ 1992 թ. փետրվարի 12-ին ընդունած «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին» օրենքն էր²⁸:

Թեև համաշխարհային օրենսդրական պրակտիկան վաղուց ընդունել և ամրագրել էր մեկ անձի կողմից ՍՊԸ ստեղծելու հնարավորությունը, այնուամենայնիվ, այդ տարիներին և՛ ՀՀ, և՛ ՌԴ օրենսդրությունները բացառում էին այդ հնարավորությունը: «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ ՍՊԸ-ներ բացառապես կարող էին ստեղծել առնվազն երկու կամ ավելի հիմնադիրներ: Ներկայիս ՍՊԸ-ի՝ մեկ անձի կողմից ստեղծվելու հնարավորությունը ՀՀ քաղաքացիական օրենսդրության համար նորամուծություն է: Այն ԱԺ-ն ամրագրեց 1998 թ.՝ Քաղաքացիական օրենսգրքի²⁹ ընդունումով: Ներկայումս ՍՊԸ-ները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (95-104-րդ հոդվածներով՝ այսուհետ օրենսգիրք) և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով³⁰ (այսուհետ՝ օրենք):

ՍՊԸ-ի ծագման ու զարգացման ուսումնասիրությամբ կարելի է անել հետևյալ եզրահանգումը: Կապիտալների կենտրոնացման անհրաժեշտությունն ու ջանքերի միավորման գաղափարները կյանքի կոչեցին ընկերական միավորումներ, որոնց իրավական կարգավորման միջոցը միավորման մասին պայմանագիրն էր: Միավորման տարբեր տեսակներն իրականացրին որոշակի կապիտալի մասնակցությունը շրջանառությանը, ուստի անխուսափելի էր տնտեսական ընկերություններին և ընկերակցություններին իրավաբանական անձի կարգավիճակ տալը: Հետագայում ապրանքների լիարժեք փոխարժեք համարվող փողի ի հայտ գալով և ապրանքադրամական հարաբերությունների զարգացումով առաջացավ այնպիսի առևտրային կազմակերպության ստեղծման անհրաժեշտություն, որի միջոցով

²⁷ Могилевский С. Д., *Органы управления хозяйственных обществ, М., 2002, с. 77.*

²⁸ «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին» ՀՀ օրենք, Ե., 12.II.1992:

²⁹ Պաշտոնական տեղեկագիր: ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ՀՕ-229, Ե., 10.VIII.1998:

³⁰ Պաշտոնական տեղեկագիր: «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք, ՀՕ-252, Ե., 17.X.2007:

առավել ճկուն և լայնածավալ դարձավ անձանց մասնակցությունը քաղաքացիական շրջանառությանը: Գոյություն ունեցող տնտեսական պահանջների շրջանակներում ձևավորվում է միավորման պարտավորություններով մասնակիցների պատասխանատվության սահմանափակման սկզբունքը: Պատասխանատվության սահմանափակման սկզբունքը նախ ձևավորվեց կոմանդիտային ընկերակցություններում, որոնց պայմաններում վաճառականները կրում էին պատասխանատվություն, մինչդեռ սվանդատուների պատասխանատվությունը սվանդաների ներդրումով սահմանափակվում էր: Սվանդատուների պատասխանատվության սահմանափակման միջոցով հնարավոր դարձավ խոշոր փողային միջոցների ներգրավումը:

Ավելի ուշ՝ XIX դ. վերջին, ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար առաջացավ ՄՊԸ-ի ստեղծման անհրաժեշտությունը: Իրավաբանական տեսանկյունից դա մի կողմից պայմանավորված էր նրանով, որ լիակատար կամ կոմանդիտային ընկերակցություն ձևավորելով՝ անձինք չէին ուզում կրել ավելի շատ պատասխանատվություն, քան իրենց ներդրումներն էին, իսկ մյուս կողմից բաժնետիրական ընկերության ստեղծումն անցանկալի էր, ինչպես հասարակության կապիտալների ներգրավման փաստով, այնպես էլ դրա ստեղծման ու գործունեության բազմաթիվ ձևերի պահպանման ծանրաբեռնվածությամբ:

Տնտեսական առումով ՄՊԸ-ի ծագման անհրաժեշտությունը պայմանավորված էր նրանով, որ մարդիկ տնտեսական ընկերության կազմակերպարարական այնպիսի ձևի կարիք ունեին, որում նրանց, ինչպես նաև նրանց ու կազմակերպության միջև հարաբերություններն առավել սերտ կլինեին: Հատկանշական է նաև, որ առևտրային ընկերության այս տեսակում ներքին պարտավորական հարաբերություններն առավել ճկուն են: Դա բացատրվում է այդ հարաբերությունների կարգավորմանն ուղղված նորմերի դիսպոզիտիվությամբ և հիմնադիր փաստաթղթի մեծ նշանակությամբ: Տնտեսական ընկերության կազմակերպարարական այս ձևը ձեռնարկատիրական գործունեության իրականացման ռիսկը նվազեցնելու և նույնիսկ վերացնելու հնարավորություն տվեց: Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը խթան դարձավ մանր և միջին առևտրի զարգացմանը և արագ լայն տարածում ստացավ մի շարք երկրներում:

ИСТОРИЯ ВОЗНИКНОВЕНИЯ И РАЗВИТИЯ ЗАКОНОДАТЕЛЬСТВА ОБЩЕСТВ С ОГРАНИЧЕННОЙ ОТВЕТСТВЕННОСТЬЮ

АРУТЮНЯН Г. С.

Резюме

Как один из видов организационно-правовых форм хозяйственных обществ, общества с ограниченной ответственностью возникли и получили законодательное закрепление с целью

удовлетворения конкретных хозяйственных требований. Данный вид хозяйственного общества по сути является переходным или, иначе говоря, эклектичным видом, сформировавшимся с совокупностью уже разработанных признаков в предпринимательских отношениях в целях выявления причин их возникновения. Анализ изложенных признаков дал возможность ответить на вопрос, когда и при каких условиях сформировался принцип ограничения ответственности участника (участников) по обязательствам общества с ограниченной ответственностью, а также выявить законодательные изменения в мировой практике, относящиеся к обществам с ограниченной ответственностью.